ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

11 հուլիսի 2016 թվականի **թիվ 55** քաղ. Աստանա

«Առեւտրի համաշխարհային կազմակերպությանը Ղազախստանի Հանրապետության միանալու հետ կապված՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքում ապրանքների ներմուծման եւ շրջանառության որոշ հարցերի մասին» Եվրասիական միջկառավարական խորհրդի որոշման նախագծի վերաբերյալ

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհուրդը **որոշեց**.

1. Հավանություն տալ «Առեւտրի համաշխարհային կազմակերպությանը Ղազախստանի Հանրապետության միանալու հետ կապված՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքում ապրանքների ներմուծման եւ շրջանառության որոշ հարցերի մասին» Եվրասիական միջկառավարական խորհրդի որոշման նախագծին (կցվում է) եւ այն ներկայացնել Եվրասիական միջկառավարական խորհրդի քննարկմանը:

2. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից 10 օրացուցային օրը լրանալուց հետո:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի անդամներ՝

Հայաստանի Հանրապետությունից՝	Բելառուսի Հանրապետությունից՝	Ղազախստանի Հանրապետությունից՝	Ղրղզստանի Հանրապետությունից՝	Ռուսաստանի Դաշնությունից՝
Վ. Գաբրիելյան	Վ. Մատյուշեւսկի	Բ. Սագինտաեւ	Օ. Պանկրատով	Ի. Շուվալով

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՄԻՋԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

« » -ի 20 թվականի **թիվ** քաղ.

Առեւտրի համաշխարհային կազմակերպությանը Ղազախստանի Հանրապետության միանալու հետ կապված՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքում ապրանքների ներմուծման եւ շրջանառության որոշ հարցերի մասին

«Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքում ապրանքների ներմուծման եւ շրջանառության որոշ հարցերի մասին» 2015 թվականի հոկտեմբերի 16-ի արձանագրության (այսուհետ՝ Արձանագրություն) 3-րդ հոդվածի իրագործման նպատակներով եւ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 16-րդ հոդվածի 1-ին կետի հիման վրա Եվրասիական միջկառավարական խորհուրդը **որոշեց**.

1. Սահմանել, որ Ղազախստանի Հանրապետության տարածքից Եվրասիական տնտեսական միության այլ անդամ պետությունների (այսուհետ՝ անդամ պետություններ) տարածքներ Ապրանքների ցանկում ներառված այն ապրանքները տեղափոխելիս, որոնց նկատմամբ Ղազախստանի Հանրապետության կողմից որպես Առեւտրի համաշխարհային կազմակերպությանը միանալու պայման ընդունված պարտավորություններին համապատասխան կիրառվում են ներմուծման մաքսատուրքերի՝ Եվրասիական տնտեսական միության միասնական մաքսային սակագնի տուրքերի դրույքաչափերի համեմատ առավել ցածր դրույքաչափեր եւ տուրքերի այդ դրույքաչափերի մեծությունների ցանկ՝

բացառությամբ Արձանագրության 3-րդ հոդվածի 3-րդ կետում նշված ապրանքների, որպես ապրանքաուղեկից փաստաթուղթ ճանաչվում է Ղազախստանի Հանրապետության հաշվառման ազգային համակարգում գրանցված էլեկտրոնային հաշիվ-ապրանքագրի թղթային պատճենը, որը բավարարում է Արձանագրության 3-րդ հոդվածի 10-րդ կետի պահանջները:

Անդամ պետությունների կառավարություններին՝ Արձանագրության 3-րդ հոդվածի 11-րդ կետին համապատասխան՝ պարտադիր ապրանքաուղեկից փաստաթղթերի նկատմամբ պահանջներ սահմանելիս դրանց կազմում նախատեսել, այդ թվում նաեւ սույն կետի առաջին պարբերության մեջ նշված՝ էլեկտրոնային հաշիվ-ապրանքագրի թղթային պատճենը:

2. Սահմանել, որ մինչեւ Եվրասիական միջկառավարական խորհրդի՝ սույն կետով նախատեսված կարգը չեղարկող որոշումն ընդունելն էլեկտրոնային հաշիվ-ապրանքագրի թղթային պատճենը հաստատվում է Ղազախստանի Հանրապետության ֆինանսների նախարարության պետական եկամուտների կոմիտեի տարածքային մարմնի կնիքով, ինչպես նաեւ ուղեկցվում հետեւյալ փաստաթղթերից մեկով՝

ա) Ղազախստանի Հանրապետության ֆինանսների նախարարության պետական եկամուտների կոմիտեի տարածքային մարմնի կնիքով հաստատված մաքսային հայտարարագրի պատճենը՝ Եվրասիական տնտեսական միության միասնական մաքսային սակագնի դրույքաչափերով երրորդ երկրներից նախկինում ներմուծված ապրանքների տեղափոխման դեպքում.

բ) ապրանքների ծագման CT-1 ձեւի հավաստագրի բնօրինակը՝ տրված «Անկախ պետությունների համագործակցությունում ապրանքների ծագման երկրի որոշման կանոնների մասին» 2009 թվականի նոյեմբերի 20-ի համաձայնագրի անբաժանելի մաս կազմող՝ Ապրանքների ծագման երկրի որոշման կանոններին համապատասխան՝ Ղազախստանի Հանրապետության տարածքում արտադրված ապրանքների տեղափոխման դեպքում.

գ) ապրանքների ծագման CT-K2 ձեւի հավաստագրի բնօրինակը՝ տրված Ղազախստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան, կամ դրա պատճենը՝ հաստատված Ղազախստանի Հանրապետության «Ատամեկեն» ձեռնարկատերերի ազգային պալատի կողմից՝ ազատ տնտեսական գոտու եւ ազատ պահեստների տարածքներում արտադրված ապրանքների տեղափոխման դեպքում.

դ) ապրանքների ներմուծման եւ անուղղակի հարկերի վճարման մասին հայտարարության պատճենը՝ «Ապրանքների արտահանման ու ներմուծման, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման ժամանակ անուղղակի հարկերի գանձման կարգի եւ դրանց վճարման նկատմամբ հսկողության մեխանիզմի մասին» արձանագրությանը համապատասխան (Պայմանագրի 18-րդ հավելված)՝ այլ անդամ պետություններից նախկինում ներմուծված ապրանքների տեղափոխման դեպքում:

3. Առեւտրի համաշխարհային կազմակերպությանը Ղազախստանի Հանրապետության միանալու հետ կապված՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ապրանքների ներմուծման եւ շրջանառության հարցի քննարկման անհրաժեշտությունից ելնելով՝ Եվրասիական միջկառավարական խորհրդի հերթական նիստի ընթացքում լսել Ղազախստանի Հանրապետության՝ Արձանագրության 10-րդ կետի 3-րդ հոդվածով նախատեսված հաշվառման ազգային համակարգի ստեղծման եւ աշխատանքի վերաբերյալ Ղազախստանի Հանրապետության զեկույցը:

4. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից:

Եվրասիական միջկառավարական խորհրդի անդամներ՝

Հայաստանի Հանրապետությունից	**Բելառուսի Հանրապետությունից**	**Ղազախստանի Հանրապետությունից**	**Ղրղզստանի Հանրապետությունից**	**Ռուսաստանի Դաշնությունից**